կարնու յիշխեսցես 'ի վերայ ամենայն հարկայ մաքսից առ 'ի դիւրութիւն կողմն ժողովրդեան մերոյ, զի ոչ ոք հարկապահանջք և մաքս առուք, հաս բաժնատէրք մի՝ նեղելով և խաբէութեամբ, և կամ յերկիւղալի առնելով հանիցեն հատ մի ցորենոյ յաւելի քանթէ կարգադրութիւնն հայոց 'ի ժողովրդենէ մերմէ, և տուաք իշխանութիւն քեզ Ջատագով լինիցիս 'ի կողմանէ հասարակ ժողովրդոց բոլոր հայաստանեաց ընդ դէմ մաքսապետաց և հարկապահանջից, և ձեռնատու նոցայ լինիցիս զի մի մոցէ դանգատ նոցայ 'ի դրունս դատաստանի մերոյ ընդ դէմ զրկողաց նոցա, և թոյլ մի տացես հարկապահանջաց զի հանիցեն հարկ, հաս բաժին և այլն 'ի մաքուր յնդուց, և նուազն թողցեն վասն ժողովրդեան, թէ ոչ համահաւասար զոր ինչ տուրք 'ի Տեառնէ տուեցեալ 'ի յերեսս դաշտի նոցայ իւրաքանչիւր բաժնաւ գացի, և զամենայն զոր ինչ ռահիւ որ կարի ըստ Օրինօք դիւրին առնիլ վասն ժողովրդեան, լեր Ջատագով և Տէր քեզ Օգնական, գրուեցաւ 'ի դրունս և այլն։

Վկայեմք, որ ձեռնադրեցին, կնքեցին և յանձնեցին։

Մ. Ի. ○
Մ. Գ. ○

Ս. Տ. ○
Վ. Տ. ○
Գ. Տ. ○